



ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ, ԵՊՀ

ՓՈՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԻԳՈՐԻՍ ԱՂԹԱՄԱՐՅՈՒ ՏԱՂԵՐՈՒՄ

ԺԶ. դարի առաջին կեսի բանաստեղծ, եկեղեցական ու մշակութային գործիչ, մանրանկարիչ Գրիգորիս Աղթամարցին ապրել է մոտավորապես 1480—1544 թթ.: Նրա կենսագրական տվյալները կցկտուր են եւ հիմնականում քաղված իր բանաստեղծություններից: Գրիգորիս Աղթամարցին Արծրունյաց թագավորական տոհմից է՝ հայոց վերջին արքա Սմբատ Արծրունու ծոռը, աշակերտել է Արճեշի վանքի վարդապետ Գրիգոր Բաբունուն: Հետ ձեռագրական տվյալների՝ նա կաթողիկոսական գահ է բարձրացել 1512 թ. ժառանգական իրավունքով՝ իբրեւ Արծրունյաց տոհմին պատկանող կաթողիկոսական գավազանի հաջորդական կրող: Այդ փաստը վկայված է նրա մի քանի բանաստեղծությունների վերնագրերում՝ «Ի Գրիգորիս կաթողիկոսէ Աղթամարոյ ըստ անունն երգողին», «Ի Գրիգորիս Աղթամարցի կաթողիկոսէ ասացեալ», «Նորին Գրիգորիս կաթողիկոսի ասացեալ» եւ այլն:

ԺԶ.—ԺԸ. դարերը հայ ժողովրդի պատմության մեջ թերեւս ամենածանրն ու ողբերգականն են եղել. պարբերական ու երկարատեւ պատերազմները պատճառ էին դարձել հայ բնակչության զանգվածային տեղահանությունների, քաղաքական ու տնտեսական կործանարար ցնցումների, որի պատճառով նվազագույնի էր հասել գիտական կյանքը, կասեցվել էր մինչ այդ վանքերում ու եկեղեցիներում ծաղկող մշակույթի զարգացումը: Մ. Աբեղյանը նշում էր, որ ԺԶ. դարը եւ ԺԷ. դարի առաջին քառորդը հայոց կյանքի, գրականության ամենից անկյալ շրջանն է, սակայն վերջին ծայր հասած ավերմունքից հետո սկսվեց մի վերածնության շրջան հայոց կյանքի եւ գրականության մեջ¹:

¹ Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գր. Բ., Երևան, 1946, էջ 437:

Գրիգորիս Աղթամարցին գրել է տաղեր, գանձեր, կաֆաներ, ընդօրինակել ու ծաղկել ձեռագրեր: Աղթամարցու ստեղծագործության ինքնատիպությունը թելադրել է բանաստեղծական ձևի բազմազանություն: Նրա տաղերում գործածվող գունագեղ նկարագրությունները, պատկերավոր բնութագրումներն ու հուզաթափավ արեւելյան զուգորդությունները, շափազանցված ոճերը բանաստեղծական հնարանք են ու ներբողական դրսևորումներ՝ սկիզբ առած նաեւ գանձագրական կամ շարականային ակունքներից²: Գրիգորիս Աղթամարցու տաղերի լեզուն հարուստ է ինչպես գրաբարյան, այնպես էլ միջին գրական հայերենին հատուկ բառերով, միջբարբառային ժողովրդախոսակցական լեզվի ճկուն, կենդանի հնարավորությունների օգտագործումով եւ պարսկերեն, արաբերեն ու թուրքերեն բազմաթիվ փոխառություններով: Նրա հեղինակած ծայրակապերը (հուն. ἀκρο-στίχis—բանակապ, անձինք) ու այլաբանական բանաստեղծությունները անմիջական զգացումների պոռթկումներ են, որտեղ եւ խստաբարո կրոնավորն իր հոգու համար նյութ կգտներ, եւ պանդուխտը՝ մխիթարություն, եւ սիրահարը՝ ողջակեզ սիրտ, քանզի նա «ի մարմին» էր երգում՝ հույզով, մարդկայնությամբ, սիրով դեպի կյանքը³:

Միջին հայերենի բառապաշարը ուղղակի կամ միջնորդավորված ճանապարհով շարունակաբար համալրվել է փոխառյալ բառերով տարբեր լեզուներից՝ հատկապես պարսկերենից, արաբերենից, թուրքերենից, հունարենից, ասորերենից: Գրիգորիս Աղթամարցու տաղերում գործածվել են ժամանակի խոսակցական լեզվում տարածված բազմաթիվ փոխառություններ, որոնց պարզաբանումը կարելու է ինչպես հեղինակի լեզվի առանձնահատկությունների ուսումնասիրման, այնպես էլ հայոց լեզվի պատմության տվյալ փուլի՝ ԺԶ. դարի լեզվական յուրահատկությունների վերհանման տեսակետից: Տաղերում գործածված փոխառությունների բազմազանությունից պարզ է դառնում, որ բազմաթիվ բառեր մուտք են գործել բարբառների միջոցով՝ բանավոր ճանապարհով՝ հաճախ դառնալով հոմանիշ զույգերի առաջացման եւ նույնիմաստ փոխառյալ բառերի գործածության հիմք:

Գրիգորիս Աղթամարցու տաղերում գործածված փոխառյալ բառերը, ամենայն հավանականությամբ, ժամանակին գործածական են եղել տաղերգուի հայրենիքում: Այս կարգի բառերի մի մասը, չունենալով

² Տե՛ս Մ. ԱՎԳԱՆԻԳՅԱՆ, Գրիգորիս Աղթամարցի: Տաղեր, Երեւան, 1984, էջ 11:

³ Անդ, էջ 13:

գործառական լայն ոլորտ, չի մերվել լեզվի բառապաշարին եւ դուրս է մղվել հետագա գործածությունից, մի մասն էլ մնացել է հայերենի բարբառների բառապաշարում կամ ժամանակի ընթացքում ձուլվել գրական լեզվին՝ դառնալով նրա բառաշերտի կենսունակ տարր՝ իհարկե, հնչունական, երբեմն էլ իմաստային որոշ տարբերություններով, ինչպես՝ քալասան, բաղչա, բոստան, բրաբիռն, գուման, խաբար, խաբար, հալ, հասարաթ, հիրիկ, նարդոս, դալաթ, հայաթ, նար, նարակ, շաֆար, ռանգ, շարդախ, սուլթան, փարդա, ֆաբար եւ այլն:

Գրիգորիս Աղթամարցու լեզվում գործածվող փոխառությունները վերաբերում են ամենատարբեր բնագավառների. հատկապես մեծ թիվ են կազմում հոգեվիճակ, բնավորություն, սովորություն, մարդկային հարաբերություններ բնութագրող բառերը: Տաղերում շատ են հանդիպում պարսկերենով գրված բառակապակցություններ, նույնիսկ ամբողջական տողեր ու նախադասություններ, բանաստեղծական քառատողեր: Այս երեւույթը դարձել էր օրինաչափություն եւ թելադրվում էր ժամանակի լսարանի բազմազգ կազմով, դիմացինին հասկանալի լինելու ցանկությամբ, ինչպես նաեւ բանաստեղծական հանգի կարգավորմամբ:

Ստորեւ ներկայացնում ենք Գրիգորիս Աղթամարցու տաղերում գործածված փոխառություններն իմաստային-թեմատիկ խմբավորումներով՝ փոխատու լեզուների եւ համապատասխան օրինակների արձանագրումով: Իհարկե, բազմաթիվ փոխառությունների՝ հատկապես արաբերենից, պարսկերենից եւ թուրքերենից փոխառյալ բառերի փոխանցման աղբյուրը հնարավոր չէ ստույգ նշել: Քանակական առումով աչքի են ընկնում արաբերեն բառերը, որոնց հաջորդում են պարսկերենից, թուրքերենից, հունարենից կատարված փոխառությունները: Առանձնացրել ենք հետեւյալ իմաստային խմբերը.

ա) բնություն, բնական երեւույթներ.

բրֆայ (արաբ., պարսկ.)՝ ջրավազան, լճակ (Դու կանաչ բրբֆայ ի մէջ շուկային) (105),

զօհալ (արաբ., պարսկ.)՝ երեւակ մոլորակը,

զօհրայ (արաբ., պարսկ.)՝ Արուսյակ մոլորակը,

դամար (արաբ., պարսկ.)՝ լուսին (Զօհալ մուշթարին, աստղ առաւօտին, // Զօհրայ լուսաբեր, դամար ու լուսին) (106),

մուշթարի (արաբ.)՝ Լուսնթագ մոլորակը,

շամս (արաբ.)՝ արեգակ,
 օտարիտ (արաբ.)՝ Փայլածու մոլորակը (Մուշթարի, զօհրայ եւ շամս, //
 Օտարիտ դէմ արեգական) (75),
 որադ-որադ (արաբ., պարսկ.)՝ թերթ առ թերթ՝ ոսկու կամ արծաթի
 (Կասէ՝ մի՛ առնէր դու ինձ հետ խաղ, // Ես եմ կարմիր որադ-որադ) (38),
 ռահ (պահլ.)՝ ճանապարհ (Զօրն ի ի ճըղոյն լինիմ ի կախ, // Եւ միշտ
 դիտեմ զվարդին ըռան) (38),
 սահրայ (արաբ., պարսկ., թուրք.)՝ դաշտավայր,
 սէյրան (արաբ., պարսկ.)՝ զբոսանք (Հողմով տարբերի քո հերըդ դեղ-
 ձան, // Երբ որ ելանես սահրայ ի սէյրան) (86),
 սապահ (արաբ., պարսկ.)՝ լուսաբաց, առավոտ (Յամէն սապահ որ
 լուսանար // Պլպուլն ի վարդն ի սալամ գար) (41),
 տուշ (պարսկ.)՝ երեկոյան (Ասաց՝ ի՞նչ ժամ եղէ քեզ տուշ) (39),
 բ) կերակրատեսակ, սնունդ նշող բառեր.
 ապի հայաթ (պարսկ.)՝ անմահական ջուր (Բերկրութեան բաժակ եւ
 ապի հայաթ) (86),
 դանտ (պարսկ.)՝ քաղցր, քաղցրեղեն (Շրթունքդ է շաքար, խօսան-
 քըդ դանտ է) (85),
 շարապ (արաբ.)՝ գինի, օշարակ (Լափած սրտիս ես դու շարապ, // Որ
 սեւացել է քան զարապ) (40),
 տապարզի շաֆար (պարսկ.)՝ շաքարեղեգնից ստացված քաղցրահամ
 սննդամթերք, սառնաշաքար (Լեզուդ տապարզի շաֆար, // Քո շրթունքըդ
 վարդի թերթ է) (76),
 ֆապապ (պարսկ.)՝ խորոված (Սիրտս ի սիրու եղեր ֆապապ) (36),
 գ) կոշում, մարդկային հարաբերություններ, ազգություն, զգացում-
 ներ, վիճակ, հատկանիշներ, տեսքը բնութագրող բառեր.
 բասար (արաբ.)՝ բանականություն (Չունիմ խելք ու բասար՝ ւ ոչ
 իմաստութիւն...) (103),
 ըռանկ (պարսկ.)՝ գույն, երանգ (Ըռանկ վարդին որպէս ըզլալն)
 (37),
 ըռաւան (պարսկ.)՝ սահուն, վարժ (Երբ որ կու շարժիս ոտքդ ըռա-
 ւան, // Ուր որ դադարիս, այն տեղն է պոստան) (90),
 զէնէհար (պարսկ.)՝ ապավինություն, պաշտպանություն (Գնամ
 ի վարդն ի զէնէհար, // Եւ ծառայեմ սրտովս յոժար) (98),
 խան (պարսկ.)՝ իշխան (Հանց սիասաթով իջնուս քան զխան) (90),

կուման//գուման (պարսկ.)՝ կասկած (Ծաղկունքն ամէն ասէն նորա միաբան, // Եթէ բընաւ շունիմք ի վարդէն կուման) (100),

թառ (պարսկ.)՝ դալար, նուրբ, քնքուշ,

լատիֆ (արաբ., պարսկ.)՝ վայելուչ, մեղմ, հաճելի (Գեղեցիկ բազայ, լատիֆ ու թառ էս) (86),

թասալլու (արաբ., պարսկ., թուրք.)՝ մխիթարանք (Մեզնէ քեզ թասալլու է հազար տաստան) (100),

թատալիր//թալիր (արաբ., պարսկ.)՝ հնար (Զի՛շար ու չի՛ թատալիր...) (32),

խարաբ (արաբ.)՝ ընկճված, տխուր,

հալ (արաբ., պարսկ., թուրք.)՝ վիճակ (Իմ հալս առանց իւրն է խարաբ) (36),

հազերի (արաբ.) պատրաստակամ (Հազերի ալէմ, բժիշկ ամէնի) (80),

հայիֆ (արաբ., թուրք.)՝ ամսոսանք արտահայտող բառ (Հայիֆ իմ կարճ արեւուս) (45),

հասրաթ (արաբ., պարսկ., թուրք.)՝ կարոտ, փափագ (Նա փարատի զինչ կայ հասրաթ) (36),

հարամ (արաբ.)՝ անմաքուր (Կեանքս է հարամ, թէ գիտես) (56),

դալատ (պարսկ., թուրք., արաբ.)՝ սխալ, սխալմունք (Եթէ բան մի դալատ ի գիրքս գըտանես, // Ըստ քո սուրբ խորհրդոյդ, որ զինքըն ջնջես) (57),

դալմուղ (թուրք.)՝ կալմիկ (Եւ ազգ մի բովանդակ զամէն գերեցին, // Զոր ի լեզուն իւրեանց դալմուղ կոչէին) (29),

դըրար//դարար (արաբ.)՝ հանգիստ, դադար (Դարձեր եմ մաղասկաթ եւ շունիմ դըրար) (99),

դարիպ (արաբ., պարսկ.)՝ պանդուխտ (Ղարիպ կենօք շրջիմ էս) (56),

դուսայ⁴ ցավ, վիշտ,

նուտայ (պարսկ., թուրք.)՝ անշատ, բաժան,

նազայ//ջազայ (արաբ., պարսկ.)՝ պատիժ (Զօրն կու մաշիմ ի հոգս 'ւ ի դուսայ (Վախեմ, թէ լինիմ ի քեզնէ նուտայ, // Կամ զիս մոռանաս ու տաս ինձ նազայ) (87),

մէստան (պարսկ.)՝ հարբած, գինով (Նայեանց մէկ ընդ իս աշօքըդ մէստան) (89),

⁴ Այս բառի մասին մեր գտած միակ տեղեկությունն այն է, որ այն արձանագրված է որպես Ղարաբաղի բարբառում գործածական բառ վերոբերյալ նշանակությամբ (տես «Հայոց լեզվի բարբառային բառարան», Երևան, 2001, հտ. Գ., էջ 359):

մօլլայ (արաբ., թուրք., պարսկ.)՝ մահմեդական կրոնավոր (Նտուն զնա ի մօլլան, զի օրէնք ուսցի) (32),

շիրին (պարսկ.)՝ քաղցր, անուշ (Յայդ շիրին լեզուէդ տուր երկու զըրոյց (89),

րաբունի՝(եբր.)՝ վարդապետ, տեր (Ռաբունոյն Եդեմ ծաղկած, // Մեզ պատճառ եղեր կենաց) (69),

սալվար (պարսկ.)՝ առաջնորդ,

սուլթան/սուլտան (արաբ.)՝ միապետ, թագավոր (...Որ է ամէն ծաղկանց սալվար ու սուլթան) (99),

սապապ (արաբ., պարսկ.)՝ միջնորդ, պատճառ (Ես կու մաշիմ վարդին սապապ) (36),

սիասաթ (պարսկ., արաբ.)՝ իշխանություն, զորություն (Հանց սիասաթով իջնուս քան ըզխան) (90),

սուշ (թուրք.)՝ մեղք, հանցանք (է՛ր կու խոցես զիս առանց սուշ) (39),

սուրաթ (արաբ., պարսկ.)՝ դեմք, կերպարանք (Սուրաթդ է սադաֆ մարգարտաբրտունք) (86),

փեղամպար (պարսկ.)՝ մարգարե, պատգամաբեր (Ինձ ուրանալ գՔրիստոս է անհնարին // Եւ կամ հնազանդել ձեր փեղամպարին) (31),

փիատայ (պարսկ., թուրք.)՝ հետիոտն, հետեւակ (Եկեալ է մանուշակ վարդին փիատայ) (102),

դ) բուսականդանական աշխարհ.

ամպար//ամբէր (արաբ., պարսկ.)՝ վիշապաձկան արտաթորած բուրումնամետ հյուսթ (Շրթունքդ է քո լար, կլափդ է ամպար) (46),

բազայ//պազայ (պահլ.)՝ բազե (Գեղեցիկ բազայ, լատիֆ ու թառ ես) (86),

բրաբիոն (հուն.)՝ շքանարգիզ (Համասփիւռ ծաղիկ ես բուրաստանին, // Բրաբիոն պայծառ ի յԱդին դրախտին) (106),

գըզաթ (ասոր.)՝ բուրդ, գեղմ (Աղբիւր կնքեալ ջրոյն կենդանի, // Սէզ եւ գըզաթ երկնային ցօղի) (49),

դրախտ (պարսկ.)՝ ծառ,

սալվի (պարսկ., թուրք.)՝ նոճի,

շինար (պարսկ., թուրք.)՝ սոսի (Նըռնենի դրախտ եւ սալվի շինար) (90),

թուրինն (արաբ., պարսկ.)՝ ծառատեսակ (Ծառ եմ տնկեր ու շատ տունկս, նարինճ ու թուրինն եւ ալլ տունկս) (43), ըռահան//ըռայհան (արաբ.)՝ ռեհան՝ միամյա բույս,

մուտ⁵ (պահլ.)՝ մրտենու պտուղը (Նունուֆար ծաղիկ, գույն ըռահանին, // Մուտ եւ բալասան փափուկ շուշանին) (106), ըստաշխ⁶ (պարսկ.)՝ կնդրուկի նման անուշահոտ նյութ (Մըրար ըստաշխից եւ իւղ մեծագին) (86),

լալա (պարսկ.)՝ կարմիր կակաչ (Ըռանկ վարդին որպէս լալա) (37),
կուզար (պարսկ.)՝ ծաղկունք,

սամպուլ/զմպուլ (պարսկ.)՝ փետրախոտ (Սամպուլ՝ ըռայհան, լալա ու կուզար) (81),

հազար տաստան (պարսկ., թուրք.)՝ սոխակ (Մեզնէ քեզ թասալու է հազար տաստան) (100),

հիրիկ (հուն.)՝ անուշահոտ ծաղիկ,

նուման (պարսկ.)՝ հարսնուկ, պուտ-պուտ (Նումանի ծաղիկ եւ փրթը-թեալ վարդ) (81),

պալասան (արաբ.)՝ անուշահոտ յուղով թուփ,

զմուտ (հուն.)՝ անուշահոտ խունկ,

հալուէ (հուն.)՝ խնկախոտ⁷,

կալիս⁸ (արաբ.)՝ մի տեսակ բույս, օշնան (Կըմդուկ եւ զըմուտ հալուէ, // Անճառ հոտ ի քէն բուրէ) (65),

կնդրուկ (պահլ.)՝ լիբանոս, ազնիվ խունկ,

կինամոն (հուն.)՝ դարչին (Հիրիկ, կինամոն, նարդոս, պալասան ի յեգիպտոսէ, // Քըրքում եւ զըմուտ շուշան, դու ազնիւ քան զգոհար հալուէ) (77),

կիպարի/կիպարիս (հուն.)՝ նոճի (Կիպարի, նոճի, կանաչ ձիթենի) (86),

կուլ (պարսկ., թուրք.)՝ վարդ (Նօ կուլ ու սամպուլ ես էի կարոտ) (87),

դումրի (արաբ., պարսկ.)՝ տատրակ,

⁵ Այս բառը, ըստ Հ. Աճառյանի, կարող էր փոխառվել թե՛ իրանյան ձեւից, թե՛ հունարենից, բայց քանի որ առաջին դեպքում սպասելի էր «մյուտ» բառաձեւը, ուստի բառը փոխառվել է իրանյան ձեւից (տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան (այսուհետ՝ ՀԱԲ), հտ. Գ., Երեւան, 1977, էջ 364):

⁶ Այս բառն առաջացել է պահլավերեն «ստախշա» ձեւից, ապա անցել հունարենին եւ ժողովրդական ստուգաբանությամբ նմանեցվելով «կաթկթող» բառի իմաստին՝ դարձել է «ստախշ»: Հայերենում կարող էր փոխառվել նաեւ վրացերենից: Հեղինակը մեկ այլ տաղում բերում է «տաշխ» ձեւը (Մնութն քո նրման տաշխի (էջ 95), որը, ինչպես նշում է Հ. Աճառյանը, առաջացել է «ստախշ» բառի նախաձայն ս-ի անկումով (տե՛ս ՀԱԲ, հտ. Գ., Երեւան, 1979, էջ 270, 370):

⁷ Արաբերենում, պարսկերենում՝ aloë, alva. սրանց բոլորի արմատը հնդկերենն է, սակայն հայերենը փոխառել է հունարենից՝ ավելացնելով հ (տե՛ս ՀԱԲ, հտ. Գ., էջ 11):

⁸ Հ. Աճառյանը բերում է «կալի» ձեւը՝ «ծովային բույս, որից սողա են հանում, բոյս, զորոյ զմոխիրն գործեն կամ շինեն ապակի եւ օճառ» (ՀԱԲ, հտ. Բ., Երեւան, 1973, էջ 486):

պլպուլ (պարսկ., թուրք.)՝ սոխակ⁹ (Քաղցր եղանակեն պլպուլն ու ղումրին, // Սիրով են վառեալ ի կարմիր թըփին) (105),

ղօննայտըհան (պարսկ.)՝ կոկոնաբերան¹⁰ (է, ղօննայտըհան, ծաղիկ նըռնենի) (88),

մուշկ (պահլ.)՝ ընկուզի մեծությամբ մանուշակագույն բույս (Մուշկ ու մանուշակ, հովիտ ծաղկալի) (82),

մանանայ (ասոր.)՝ բույսերի արտադրած քաղցրահամ նյութ՝ գազ-պեն (Գրեալ մակագիծ կտակ // Սափոր մանանին ունակ) (69),

մըրդի թութակ (պարսկ.)՝ թռչուն, հավք,

նագուֆ տայուս (պարսկ., թուրք.)՝ քնքուշ սիրամարգ (Դու նագուֆ տայուս եւ մըրդի թութակ) (88),

մըրդի սահար (արաբ., պարսկ., թուրք.)՝ առավոտյան թռչուն (Քաղց-րաձայն կաքաւ մըրդի սահար ես) (86),

նարգիզ/նէրկիզ (պարսկ.)՝ նարգես ծաղիկ,

նոնոֆար/նունոֆար (արաբ.)՝ ջրաշուշան (Նարգիզ, նոնոֆար, բըլուր կընդըրկի...) (82):

նարդոս (հուն.)՝ անուշահոտ յուղատու ծաղիկ,

բրֆում (պահլ.)՝ սոխարմատավոր բույս եւ դրա ծաղիկը, զաֆրան (Եկ իմ գեղեցիկ բրֆում եւ նարդոս) (81),

նաֆայ¹¹ (պարսկ.)՝ մշկայծյամի պարկը, որտեղ հավաքվում է մուշկը (Ի մէջ հոշակաւոր քաղաքըն Խաթայ, // Ուր մուշկն է պատուական երէոյ նաֆայ) (28),

պաղշայ/բաղշայ (պարսկ., թուրք.)՝ պարտեզ (Ի մէջ պաղշին վըրան գարկին) (98),

պոստան (պարսկ.)՝ այգի, պարտեզ (Ուր որ դադարիս, այն տեղն է պոստան) (90),

ռաւանդ (պարսկ.)՝ խաշնդեղ (Եւ անդ լինի ռաւանդն չըքնաղ չինին գայ) (29),

սանտալի (արաբ., պարսկ.)՝ սանդալենի՝ մշտադալար ծառ, սարդ¹² (արաբ.)՝ Լիբանանի մայրի,

⁹ Մեկ այլ տաղում կա նաեւ «շահ պլպուլ», որ նշանակում է սոխակների թագավոր («Նա շահ պլպուլն ձայն էած») (78):

¹⁰ Գործածում է նաեւ «փուստաըհան»՝ պիստակաբերան (86):

¹¹ Գործածված է նաեւ «նաֆայի թաթար»՝ արտահայտությունը, որ նշանակում է «թաթարական նաֆա» (90):

¹² Հ. Աճառյանը սխալ է համարում ՆՀԲ-ում արձանագրված «սոճի, թխկի» իմաստները եւ բառը համարում է արաբերենից փոխառյալ՝ «sidr» մի տեսակ ծառ, որ ունի ընտանի եւ

նուման (պարսկ.)՝ հարսնուկ, կակաչ (Նոճի, մրտենի, սամտալի եւ սարդ // Նումանի ծաղիկ եւ փըթըթեալ վարդ) (81),

շմշատ (պարսկ.)՝ տոսախ,

սինուբար (արաբ., պարսկ.)՝ սոճի,

տուբի//տուպի (արաբ., պարսկ.)՝ դրախտի ծառերից մեկի անունը (87), Տոսախ¹³ (եբր. կամ հուն.)՝ ծառատեսակ (Տոսախ, սինուբար, շմշատ ու տուբի) (87),

րամ (պահլ.)՝ երամ, խումբ,

ֆաֆուր վարդ¹⁴ (պարսկ.)՝ մուգ կարմիր (Ռամֆ թռչնոց, զձեզ մոռացայ, // Յորժամ զֆաֆուր վարդն տեսայ) (98),

ե) կահկարասի, տարբեր իրեր, զարդեր.

ակատ (հուն.)՝ թանկագին քար (Ակատ, կարկեհան, յակինթ, մարգարիտ՝ ելեալ ի ծովէ) (77),

եաղութ (արաբ., պարսկ.)՝ հակինթ,

զըմրութ (թուրք.)՝ վառ կանաչ թանկագին քար (Եաղութ ու զըմրութ, գոհար մեծագին) (80),

զընճիլ (պարսկ., թուրք.)՝ շղթա, կապանք (Դըրիբ ըզգերիս զընճիլ՝ ի զընտան) (90),

թան (պարսկ.)՝ թագ (Ծաղկանցն ամէն եմ սար ու թան // Պայծառ գունով լուսաճաճանչ) (38),

խանչար//խանչալ (արաբ., պարսկ.)՝ դաշույն (Թարթափդ է խանչար, ինքն՝ պողպատ զուտ) (90),

կեփազ (եբր.)՝ մաքուր ոսկի (Կեփազայ ոսկի եւ մաքուր արծաթ) (81),

ղամբար//լամբար (հուն.)՝ շահ (Ղամբար վառեալ լուսաւոր, // Խորհուրդ ծնընդեան քո խոր) (65),

լալ (արաբ., պարսկ.)՝ սուտակ,

նոհար (արաբ., պարսկ.)՝ գոհար, թանկագին քար (Զըմուռ եւ հալուէ ու լալ ու նոհար) (90),

վայրի տեսակները» (ՀԱԲ, հտ. Դ., էջ 186):

¹³ Այս բառի ծագման մասին որեւէ վկայություն չկա. ըստ Հ. Աճառյանի՝ նշանակում է «...մի տեսակ կարծր փայտ եւ նրա ծառը» (տես ՀԱԲ, հտ. Դ., էջ 442): ՆՀԲ-ն կապում է եբրայեցիների եւ հունարենի հետ՝ *spina alba*:

¹⁴ «Քաֆուր» բառն առանձին փոխառյալ է պարսկերենից՝ ֆափուր՝ *camphora*, սակայն հայտնի բոլոր բառարաններում «ֆափուր վարդ» արտահայտությունը բերվում է «կարմիր վարդ» նշանակությամբ: Բ. Զուգասզյանը Գրիգորիս Աղթամարցու տաղերին կցված բառարանում բառը թարգմանում է «աստծուն ուրացող, անհավատ» (տես ԳՐԻԳՈՐԻՍ ԱՂԹԱՄԱՐՅԻ, Տաղեր, էջ 116): Մեր կարծիքով՝ այստեղ շփոթ կա «ֆափուր» (արաբ., թուրք.)՝ «անհավատ», «անխիղճ» բառերի հետ:

դահանակ (պահլ.)՝ կանաչ ու դեղին ազնիվ քար,
 յակիմք (հուն.)՝ կապույտ թանկագին քար,
 յասպիս (հուն.)՝ կարմրականաչ քար,
 սարդիոն (հուն.)՝ դեղնակարմիր անգին քար (Յակիմք, դահանակ գու-
 նով, // Սարդիոն, յասպիս լուսով) (66),

մարնան (արաբ., պարսկ.)՝ բուստ, մարջան (Յաղութ ու մարնան, լալ
 Պատաշխանի) (76),

նշտար (պարսկ.)՝ սուր դանակ (Թարթափդ է թեք քան ըզնշտար սուր) (88),
 շափիղայ (ասոր.)՝ պատվական քար,
 տըպագ (հուն.)՝ ազնիվ քար՝ տպագիոն (Տըպագ մեծագին, յասպիս,
 շափիղայ, լոյսն ի քէն ցայտէ) (77),

շինի (պարսկ.)՝ ճենապակի (Եւ անդ լինի ուսանդն չըքնաղ շինին
 գայ) (29),

սադաֆ (արաբ., պարսկ.)՝ ազնիվ քար՝ գաղտակուր (Փայլուն մար-
 գարիտ ի մէջ սադաֆին) (80),

սուտակ (եբր.)՝ պատվական քար՝ կարկեհան, մեղեսիկ (Ակըն դահա-
 նակ, սուտակ, ելեալ ես ի Փիսոն գետէ) (77),

թիր (պարսկ.)՝ նետ,
 ֆաման (պարսկ., թուրք.)՝ աղեղ, կամար (Ուներդ է ֆաման, թար-
 թափդ է քո թիր) (85),

փարտա (պարսկ.)՝ վարագույր, քող (Զկանաչ փարտա յետ կու բա-
 նամ) (39),

զ) շինուիյուն, աշխատանք.

դարան (պահլ.)՝ ապաստան (Ոչ ունիմ տեղ՝մ ես դարան// Կամ աւուր
 մ՞ երկու ապաստան) (55),

զընտան (պարսկ.)՝ բանտ, զնդան (Դըրիր ըզգերիս զընճիլ 'ւ ի զըն-
 տան) (90),

մէհրապ (արաբ., պարսկ., թուրք.)՝ մզկիթի ավագ սեղանը՝ կամարա-
 կապ որմնախորշը (Մէհրապ է քաշած զուներդ ի նմա, // Աչերդ է կանթեղ
 ի ներքոյ նորա) (84),

մէտրասայ (պարսկ., արաբ.)՝ դպրոց, ուսումնարան,
 սախտել (պարսկ.)՝ պատրաստել, կառուցել (Սախտեալ գեղեցիկ, ոս-
 կի մէտրասայ) (84),

շարտախ (պարսկ., թուրք.)՝ տաղավար (Տուն եմ շիներ մէջ այգոյս, //
 Ոսկով նաշխած շարտախնու) (103),

է) ուսում, արվեստ.

ալեմ (արաբ., պարսկ.)՝ գիտուն, ուսյալ (Համասփիլո ծաղիկ անթառամելի, // Հագերի ալեմ, բժիշկ ամէնի) (80),

աշըղ (արաբ.)՝ սիրահար (Ասաց թէ՛ սէրըն կու նեղէ, // Որ վրայ վարդին աշըղ եղէ) (37),

ղազալի (արաբ., պարսկ.)՝ սիրերգ (Կանչեց պլպուլն ըզղազալին) (98),
 ֆալամուլլահ (արաբ., պարսկ.)՝ Ղուրան (Աչերդ է կանթեղ ի ներքոյ նորա, // Կարդան անդադար անդ ֆալամուլլահ) (84):

ԺԶ.—ԺԸ. դարերի վաղ աշխարհաբարի բազմաժանր գրականության մեջ՝ հատկապես բանաստեղծների գործերում, իրենց բազմազանությունամբ եւ բազմաբանակությունամբ աչքի են ընկնում նաեւ հարադիր բայերը, հատկապես նրանք, որոնց հարադիրը փոխառյալ բառ է արաբերենից, թուրքական լեզուներից, պարսկերենից¹⁵: Սրանց մի մասը, առատորեն ներմուծվելով գրավոր աղբյուրների մեջ, լայն քաղաքացիություն է ստացել իր ժամանակին եւ ձուլվել լեզվին, ստացել ընդհանուր գործածություն: Պետք է նշել, որ այս հարադիր բայերը հեղինակի տաղերում մեծ մասամբ նորակազմություններ են, որոնցից շատերը զուգահեռաբար ունեն համապատասխան համադրական ձևեր՝ ֆրեւաթ առնել՝ ողբալ, դառղ լինել՝ խեղդվել եւ այլն: Նորակերտ հարադրական բայերից ամենատարածվածը գոյական + բայ կաղապարով հարադրություններն են, ինչպես՝ ղամբաւ կազմել, նազ առնել, նաւակ անել եւ այլն:

Գրիգորիս Աղթամարցու տաղերից մեր քաղած կառույցների դիտարկումն ապացուցում է, որ օտարակազմ հարադրավոր բայերի հարադիրն արտահայտում է տվյալ կառույցի հիմնական իմաստը: Օտարաբառ հարադիրը, ըստ երեւույթին, հայերենին է անցել նախ հարադրավոր բայ կերտելու՝ ինչ-ինչ հասկացություն արտահայտելու համար: Հետագա գործածությամբ այդ հարադիրները մերվել են լեզվին, ստացել ընդհանուր գործածություն եւ կազմել նոր բաղադրություններ¹⁶: Դժվար է ասել, թե ներկայացվող կառույցներից որոնք կարող են դիտվել որպես խոսակցական լեզվի միավորներ, որոնք՝ բարբառային:

Ներկայացնենք փոխառյալ բաղադրիչներով հարադրությունները՝ համապատասխան օրինակներով՝ նշելով փոխառության աղբյուրը.

¹⁵ Տե՛ս Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Բայական հարադրությունները Նաղաշ Հովնաթանի տաղերում, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 1984, №9, էջ 38:

¹⁶ Տե՛ս Ն. ՊՈՂՈՍՅԱՆ, Զահուկյանական ընթերցումներ, Երևան, 2005, №4—5, էջ 142:

զար (պարսկ.) անել՝ ողբալ (Քանի՞ անեմ զար յիւր սիրուն) (98),
 հերիք (թուրք.) անել՝ բավականացնել (Ծաղկունքն ասեն՝ հերիք արա)
 (35),

դազալ (արաբ., պարսկ.) կանչել՝ տաղ ասել (Կանչեց պլպուլն ըզդա-
 զալին) (98),

դամբար (հուն.) կազմել՝ լուսավորել (Լուսավալյալ դամբար կազմես,
 քաղցրահամ կերակուրն ի քէն) (78),

դարդ (արաբ., պարսկ.) լինել՝ սուզվել (Ղարդ եղայ ի ներս՝ և եղէ ան-
 ճարակ) (90),

նարակ (պահլ.) անել՝ միջոց, հնար գտնել (Գրիգորիս, նարակ արա //
 Եւ զմեղաց աղտն ի քէն լուա՛) (55),

մաղասկաթ (թուրք.) դառնալ՝ ընկնավորվել (Ով որ տեսանէ, դառնայ
 մաղասկաթ) (81),

մուշթուլուխ (թուրք.) տանել՝ ավետիս տալ (Եւ մուշթուլուխ տարան
 վարդին) (97),

յատապ (արաբ., պարսկ., թուրք.) առնել՝ տանջել, չարչարել (Քանի՞
 առնէք դուք ինձ յատապ) (36),

նազ (պարսկ., թուրք.) առնել՝ փայփայել, գուրգուրել (Ով նենգու-
 թեամբ առնէ քեզ նազ, // Թող իւր աւուրքն դառնա նըվազ) (36),

նատար//նազար (արաբ., պարսկ., թուրք.) առնել՝ աչքով անել (Դու
 նայիս եւ առնես նատար) (89),

շատլըխ (թուրք.) անել՝ ուրախանալ (Ծաղկունքն ամէն շատլըխ արին)
 (97),

պէհալ (պարսկ.) լինել՝ թուլանալ, խեղճանալ (Տեսաւ պլպուլն, եղաւ
 պէհալ) (37),

պէուշ (պարսկ.) լինել՝ ուշաթափվել (Թըմրաւ պլպուլն, եղեւ պէուշ)
 (39),

սալամ (արաբ.) գալ՝ ողջունել (Յամէն սապահ որ լուսանար, //
 Պլպուլն ի վարդն ի սալամ գար) (41),

փոշիման (պարսկ.) դառնալ՝ զղջալ (Երբ որ մտանես ի հող՝ և ի տա-
 պան, // Ապա աւաղես, դառնաս փոշիման) (91),

ֆապապ (արաբ.) լինել՝ սիրուց խորովվել, մտածել (Սիրտս ի սիրու
 եղեր ֆապապ) (36),

ֆըղան (պարսկ., թուրք.) կանչել՝ լաց ու կոծ անել (Քանի՞ ֆըղան կան-
 չեմ անչափ) (41),

Ֆրեւաթ (պարսկ. թուրք.) առնել՝ ողբալ, օգնության կանչել (Ֆրեւաթ կառնէ ինքն յամէն ժամ) (39):

Տաղերում հանդիպում է նաեւ մեկ եռաբաղադրիչ հարադրություն, որի փոխառյալ հարադիրն արտահայտվում է բաղնջուսական կապակցությամբ՝ զար ու ֆիղան (պարսկ., թուրք.) կանչել՝ լաց ու կոծ անել (Խնդրէր եւ հարցանէր ըզիւր սիրելին, // Կանչէր զար ու ֆիղան ի մէջ գիշերին) (99):

Այսպիսով Գրիգորիս Աղթամարցու տաղերում գործածվող մեծաքանակ փոխառություններն արձագանքն են ժ.Ձ. դարի հայ կյանքի ու մտածողության, եւ վստահաբար կարելի է ասել, որ փոխառությունների այսքան առատ դրսևորումները հեղինակի տաղերի յուրահատուկ առանձնահատկությունն են:

РЕЗЮМЕ

Изучение литературных памятников средневековой Армении дает важный материал для истории армянского языка. Лексический состав среднеармянского языка постоянно пополнялся и обогащался по ходу развития, отражая изменения, происходящие в жизни народа. Этот период достаточно богат заимствованиями, которые прижились в языке благодаря культурным, политическим и торговым связям армянского народа с другими народами. Сказанное безоговорочно можно отнести к стихам Григориса Ахтамарци, который развил широкую литературную деятельность. Он сочинил стихи, которые отличаются художественными достоинствами. Его стихи изобилуют арабскими, персидскими, турецкими, греческими заимствованиями. Целью этой статьи является исследование заимствований, употребленными им, выяснение сферы их употребления, а также выявление их смысловых и семантических особенностей.

SUMMARY

The study of literary monuments of medieval Armenia provides important materials for the history of the Armenian language. The lexical composition of the

Middle Armenian language was constantly replenished and enriched in the course of development, reflecting the changes taking place in the life of the people. That period is quite rich in loanwords, which took root in the language thanks to the cultural, political and commercial relations of the Armenian nation with other nations. The afore-said can be unconditionally attributed to the poems of Grigoris of Akhtamar, who had a wide literary activity. He composed poems distinguished by their fictional value. His poems abound in Arabic, Persian, Turkish, Greek loanwords. The purpose of this article is to study the loanwords used by him, to clarify the scope of their use, as well as to identify their semantic features.

